Սոցիալական ապահովության համարներ՝ ոչ-քաղաքացիների համար

Արդյո՞ք ոչ-քաղաքացուն անհրաժեշտ է սոցիալական ապահովության համար:

Եթե Դուք Միացյալ Նահանգներում աշխատել ցանկացող ոչ-քաղաքացի չեք, ապա Ձեզ, հավանաբար, սոցիալական ապահովության համար անհրաժեշտ չէ:

Ընդհանրապես, սոցիալական ապահովության համար կարող են ստանալ միայն Ներքին անվտանգության նախարարության (DHS) կողմից Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն ստացած ոչ-քաղաքացիները: Սոցիալական ապահովության համարներն օգտագործվում են՝ պետությանը անձի աշխատավարձի մասին հաշվետվություն ներկայացնելու և անձի՝ Սոցիալական ապահովության նպաստներ ստանալու իրավասությունը որոշելու նպատակով: Ձեզ սոցիալական ապահովության համար է անհրաժեշտ՝ աշխատանք, սոցիալական ապահովության նպաստներ և պետական մի շարք ծառայություններ ստանալու համար:

Օրինական հիմքով երկրում գտնվող ոչ-քաղաքացիները կարող են զանազան նպաստներ և ծառայություններ ստանալ՝ առանց սոցիալական ապահովության համար ունենալու: Ձեզ համար անհրաժեշտ չէ՝ վարորդական իրավունք ստանալու, դպրոց ընդունվելու, մասնավոր բժշկական ապահովագրություն ձեռք բերելու և դպրոցական ճաշերի պետական ծրագրերին կամ բնակարանային շինարարության ֆինանսավորման դիմելու համար:

Որոշ կազմակերպություններ սոցիալական ապահովության համարը կիրառում են՝ իրենց պահոցներում Ձեզ նույնականացնելու նպատակով: Այնուամենայնիվ, Ձեր պահանջով՝ նրանցից շատերը այլ միջոցներով կնույնականացնեն Ձեզ:

Մենք չենք կարող Ձեզ սոցիալական ապահովության համար տրամադրել՝ միմիայն վարորդական իրավունք ստանալու կամ վարկունակության ստուգում պահանջող ծառայությունից օգտվելու համար:

Թեև շատ ընկերություններ, օրինակ՝ բանկեր և վարկային ընկերություններ, կարող են Ձեզանից պահանջել սոցիալական ապահովության համար, սակայն Դուք պարտավորված չեք ներկայացնել այն, եթե չունեք:

Ինչպե՞ս սոցիալական ապահովության համար և քարտ ստանամ:

Դիմելու երկու եղանակ կա.

- Կարող եք դիմել Ձեր մշտական բնակության վայրից՝ նախքան Միացյալ Նահանգներ ժամանելը՝ ներգաղթի վիզայի համար ԱՄՆ պետդեպարտամենտ դիմում ներկայացնելիս: Գրեթե բոլոր դեպքերում, ներգաղթի վիզայի Ձեր դիմումի հետ սոցիալական ապահովության համար և քարտ ստանալու դիմում ներկայացնելով՝ Դուք ազատվում եք Միացյալ Նահանգներում սոցիալական ապահովության գրասենյակ այցելելու անհրաժեշտությունից: (Լրացուցիչ տեղեկությունների համար տես ***www.socialsecurity.gov/ssnvisa*** կայքէջը) կամ
- Կարող եք անձամբ այցելել սոցիալական ապահովության գրասենյակ:

Եթե Դուք ներգաղթող չեք կամ ներգաղթի վիզայի համարի հետ մեկտեղ սոցիալական ապահովության համար ստանալու չեք դիմել, ապա պետք է ունենաք DHS-ից ստացած Ձեր թղթերը, որոնք ապացուցում են ԱՄՆ ներգաղթի Ձեր կարգավիճակն ու Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվությունը: Ապա, պետք է այցելեք սոցիալական ապահովության գրասենյակ և դիմեք՝ համար և քարտ ստանալու: Խորհուրդ ենք տալիս նախքան սոցիալական ապահովության համարին դիմելը սպասել, մինչև Միացյալ Նահանգներ Ձեր ժամանման օրից լրանա 10 օր: Այդ կերպ մեզ համար ավելի հեշտ կլինի ստուգել Ձեր DHS-ի փաստաթղթերն առցանց ռեժիմով, ինչն իր հերթին կարագացնի սոցիալական ապահովության համարի Ձեր դիմումի մշակման գործընթացը: Սոցիալական ապահովության համար և քարտ ստանալու դիմումն անվճար է: Դիմելու համար

- Լրացրեք *Սոցիալական ապահովության քարտի դիմումը* (ձև SS-5),
- Ներկայացրեք մեզ փաստաթղթեր, որոնք ապացուցում են Ձեր
  - — ինքնությունը
  - — ներգաղթի կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ
  - — տարիքը, և
- Լրացված դիմումն ու փաստաթղթերի բնօրինակները տարեք սոցիալական ապահովության Ձեր տեղական գրասենյակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կա՛մ բնօրինակ, կա՛մ տրամադրող մարմնի կողմից հաստատված պատճեններ: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի պատճեններ, այդ թվում՝ նոտարի կողմից վավերացված: Մենք չենք կարող նաև ընդունել ստացական, որը ցույց է տալիս, որ Դուք դիմել եք՝ տվյալ փաստաթուղթն ստանալու համար:

Մենք կարող ենք մեկ փաստաթուղթը երկու տարբեր նպատակներով օգտագործել: Օրինակ՝ կարող ենք օգտագործել DHS-ից ստացած աշխատանքի Ձեր իրավունքը՝ որպես Ձեր անձը հաստատող փաստաթուղթ և որպես աշխատանքի թույլտվությամբ ներգաղթի կարգավիճակի ապացույց: Ձեր ծննդյան վկայականը կամ անձնագիրը կարող է ծառայել որպես տարիքի ապացույց: **Այնուամենայնիվ, Դուք պետք է ներկայացնեք առնվազն երկու առանձին փաստաթուղթ:**

(շրջել)

Ձեր մասին բոլոր տեղեկություններն ունենալուն և համապատասխան տրամադրող մարմինների հետ Ձեր փաստաթղթերը ստուգելուն պես՝ մենք փոստով Ձեզ կուղարկենք Ձեր համարն ու քարտը:

Ինքնությունն ու ներգաղթի կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ

Ձեր ինքնությունն ու աշխատանքի թույլտվությամբ ներգաղթի կարգավիճակն ապացուցելու համար մեզ ներկայացրեք ներկայիս ԱՄՆ ներգաղթի փաստաթղթերն ու ժամկետը չլրացած անձնագիրը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերի թվում են.

- I-551 ձևը (ներառում է ներգաղթողի մեքենաընթեռնելի վիզա)
- I-94 ձևը (*մեկնման և ժամանման արձանագրում*),որում երևում է DHS-ի աշխատանքի թույլտվությունը, կամ
- I-766 ձևը (*աշխատանքի տեղավորման թույլտվության քարտ*)

Փոխանակման ծրագրի շրջանակներում այցելող անձինք. Եթե Դուք փոխանակման ծրագրի J-1 կամ J-2 այցելու եք, ապա պետք է մեզ ներկայացնեք նաև Ձեր DS-2019 ձևը՝ *Փոխանակման ծրագրով այցելող անձի կարգավիճակ ստանալու իրավասության վկայականը*: Եթե Դուք J-1 ուսանող եք, ուսանող-պրակտիկանտ կամ միջազգային այցելու, ապա պետք է նամակ ներկայացնեք Ձեր հովանավորից: Նամակը պետք է լինի հովանավորի բլանկի վրա և ունենա բնօրինակ ստորագրություն, որով Ձեզ թույլատրվում է աշխատել:

Միջազգային ուսանողներ. Եթե Դուք F-1 կամ M-1 ուսանող եք, ապա պետք է մեզ ներկայացնեք Ձեր I-20 ձևը՝ *Ոչ ներգաղթային վիզա ստանալու իրավասու ուսանողի կարգավիճակին համապատասխանելու վկայականը*: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք «*Միջազգային ուսանողներ և սոցիալական ապահովության համարներ*» (Publication No. 05-10181) հրապարակումը:

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք Ձեր օտարերկրյա ծննդյան վկայականը, եթե այն առկա է կամ եթե այն կարող եք ձեռք բերել 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այլ դեպքում՝ մենք կարող ենք որպես Ձեր տարիքի վկայություն հաշվի առնել այլ փաստաթղթեր, օրինակ՝ Ձեր անձնագիրը կամ DHS-ի կողմից տրված փաստաթուղթը:

Ինչ անեմ, եթե սոցիալական ապահովության համարն ինձ այլ պատճառով է անհրաժեշտ:

Եթե Դուք DHS-ից Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն չեք ստացել, ապա կարող եք սոցիալական ապահովության համար ստանալ, միայն եթե կարողանաք ապացուցել, որ այն Ձեզ անհրաժեշտ է աշխատանքին չառնչվող որևէ օրինական պատճառով: Դա հնարավոր է, օրինակ՝ եթե նահանգի կամ դաշնային օրենքը պահանջի, որ Դուք սոցիալական ապահովության համար ունենաք, որպեսզի ստանաք նպաստը, որի համար արդեն ապացուցել եք Ձեր իրավասությունը:

Եթե Ձեզ համար է անհրաժեշտ, որպեսզի կարողանաք հարկեր վճարել, և Դուք չունեք Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն, ապա կարող եք դիմել Ներքին եկամուտների ծառայություն (IRS)՝ *հարկ վճարողի նույնականացման համար* ստանալու: Այցելեք IRS անձամբ կամ զանգահարեք ծառայության անվճար հեռախոսահամարով՝ **1-800-TAXFORM (1-800-829-3676)**, և պահանջեք W-7 ձևը՝ *հարկ վճարողի նույնականացման համարի դիմումը*:

Եթե որևէ ձեռնարկություն կամ պետական մարմին Ձեզնից սոցիալական ապահովության համար է պահանջում, և Դուք չունեք Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն, հարցրեք՝ արդյոք Ձեր անձը հաստատելու այլ եղանակ կա: Շատ դեպքերում անհրաժեշտ ծառայությունը կամ արտոնագիրը կարելի է ստանալ առանց սոցիալական ապահովության համար ունենալու:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10096-AM
Social Security Numbers For Noncitizens (Armenian)
September 2011